



**«ԻՆՏԵՐԱԿՏԻՎ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԶԱՐԳԱՑՈՒՄ»  
ՀԻՄՆԱԴՐԱՄ**



**ՀԵՐԹԱԿԱՆ ԱՏԵՍՏԱՎՈՐՄԱՆ ԵՆԹԱԿԱ  
ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐԻ ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՄԱՆ  
ԴԱՍԸՆԹԱՑ 2023**

**ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ**

**ԹԵՄԱ**

Տարրական դասարաններում ուշադրության պակասի և հիպերակտիվության համախտանիշ ունեցող աշակերտների ուսուցման մարտահրավերները և կառավարման արդյունավետ ռազմավարությունները

**ԱՌԱՐԿԱ**

**Դասվար**

**ՀԵՂԻՆԱԿ**

**Ստեփա Քաջիկի Սահակյան**

**ՄԱՐԶ**

**Ք. Երևան**

**ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆ Հ.174 հիմնական դպրոց**

## ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

|   |    |
|---|----|
| ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ.....   | 3  |
| ԳԼՈՒԽ 1 ՈՒՊՅՅ ՀԱՄԱԽՏԱՆԻՇ ՈՒՆԵՑՈՂ ԵՐԵԽԱՆԵՐԻ ՀԻՄՆԱԿԱՆ<br>ԲՆՈՐՈՇՈՒՄԸ և ԿՐԹԱԿԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑՈՒՄ ԱՌԿԱ<br>ՄԱՐՏԱՀՐԱՎԵՐՆԵՐԸ..... | 6  |
| ԳԼՈՒԽ 1.1 ՈՒՊՅՅ-Ի ԲՆՈՐՈՇՈՒՄԸ ԵՎ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ.....   | 6  |
| ԳԼՈՒԽ 1.2 ՈՒՊՅՅ ՉԱՐԳԱՑՄԱՆ ՆԱԽԱՊԱՏՄՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ<br>ՏԱՐԱԾՎԱԾՈՒԹՅՈՒՆԸ.....  | 9  |
| ԳԼՈՒԽ 1.3 ՈՒՊՅՅ-ՈՎ ՏԱՌԱՊՈՂ ԵՐԵԽԱՆԵՐԻ ՀԻՄՆԱԿԱՆ<br>ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԵՎ ԱԽՏՈՐՈՇՄԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐԸ.....                | 10 |
| ԳԼՈՒԽ 2 ՈՒՊՅՅ ՀԱՄԱԽՏԱՆԻՇԻ ՀԱՂԹԱՀԱՐՄԱՆ ՈՒՂՂՈՒԹՅԱՄԲ ԿԻՐԱՌԿՈՂ<br>ՈԱԶՄԱՎԱՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԵՎ ԴՐԱՆՑ ԱՐԴՅՈՒՆԱՎԵՏՈՒԹՅՈՒՆԸ.....   | 12 |
| ԳԼՈՒԽ 2.1 ՈՒՊՅՅ ՀԱՄԱԽՏԱՆԻՇԻ ԴԵՊՔՈՒՄ ԿԻՐԱՌԿՈՂ<br>ՈԱԶՄԱՎԱՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ.....  | 12 |
| ԳԼՈՒԽ 2.2 ՀԵՏԵՎԱՆՔԱՅԻՆ ՄԱՆԻՊՈՒԼՅԱՑԻԱ ԵՎ ՃԱՆԱԶՈՂԱԿԱՆ ՎԱՐՔԱՅԻՆ<br>ՄԻՋԱՄՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿԻՐԱՌՈՒԹՅՈՒՆԸ ԴՊՐՈՑՈՒՄ.....         | 13 |
| Եզրակացություն.....   | 16 |
| Օգտագործված գրականության ցանկ .....   | 18 |
| Հավելվածներ .....   | 19 |

## **Ներածություն**

**Թեմայի արդիականությունը:** Վերջին շրջանում լայն տարածում է գտել «հիպերակտիվ» տերմինը: Շրջապատում ամեն օր հանդիպում ենք «հիպերակտիվ» երեխաների: Այսպիսի երեխաներն անմիջապես աչքի են ընկնում շրջապատում իրենց շարժունակության, ակտիվության, իմպուլսիվության, կենտրոնացվածության պակասի պատճառով: Ըստ մի շարք հեղինակների այս երեխաներին բնորոշ է նաև՝ ագրեսիվությունը և աճող անհանգստությունը: Ուշադրության դեֆիցիտի կամ գերակտիվության խանգարման ախտանիշները կապված են դպրոցում սովորելու սոցիալական, վարքային և ակադեմիական ասպեկտները հաղթահարելու դժվարությունների հետ:

Վերջին տարիներին նկատվում է «հիպերակտիվ» սինդրոմ ունեցող երեխաների թվի աճ, որոնք որոշակի դժվարություններ են ներկայացնում դպրոցական միջավայրում, ուսուցչի և դասընկերների համար: Մանկական բնակչության շրջանում այս սինդրոմի տարածվածությունը կազում է 3 - ից 20% ըստ տարբեր երկրների հետազոտողների: Ընթացիկ ուսումնասիրությունը կենտրոնանում է այն մարտահրավերների վրա, որոնց բախվում են ուսուցիչները ՈւՊՀՀ ունեցող երեխաների հետ աշխատելիս, ինչպես նաև այն ռազմավարությունների վրա, որոնք նրանք օգտագործում են ՈւՊՀՀ երեխաների մասնակցությունը դասարանում բարելավելու համար:

**Հետազոտության նպատակն է** ուսումնասիրել և հասկանալ ուշադրության, պակասի, հիպերակտիվության խանգարում (ՈւՊՀՀ) ախտորոշմամբ տարրական դասարանների աշակերտների ուսումնական գործընթացում առկա մարտահրավերները և դրանց հաղթահարման ուղղությամբ կիրառվող ռազմավարությունները:

**Հետազոտության նպատակին համապատասխան լուծել ենք հետևյալ խնդիրները.**

- ուսումնասիրել ՈւՊՀՀ հիվանդությամբ ախտորոշված երեխաների վարքագծի առանձնահատկությունները, ինչպես

նաև վարքագծին առնչվող հոգեբանամանկավարժական տեսական և գործնական հիմքերը:

- ուսումնասիրել և բացահայտել ուսումնական գործընթացի այն մարտահրավերները, որոնց բախվում են ուսուցիչները ՈւՊՀՀ ունեցող աշակերտների դասավանդման ուսումնական գործընթացի շրջանակներում:
- Բացահայտել այն ռազմավարությունները, որոնք առավել արդյունավետ են ՈւՊՀՀ ունեցող աշակերտներին կառավարելու համար:

**Չետագոտության առարկան** տարրական դպրոցում ՈւՊՀՀ-ով երեխաների կրթական գործընթացում առկա մարտահրավերներն են:

**Չետագոտության օբյեկտը՝** տարրական դպրոցում ՈւՊՀՀ-ով երեխաներին կրթական գործընթացում արդյունավետ ռազմավարությունների ընտրությունն է:

**Չետագոտության մեջ կիառվել է այն վարկածը, որ** տարրական դպրոցում ուսումնական գործընթացներում ՈւՊՀՀ-ով երեխաների ուսուցման արդյունավետությունը բարձրացնելու նպատակով կարող են կիրառվել որոշ ռազմավարություններ: Ինչպիսիք են՝

- Ուսումնական պլանի համապատասխանություն ՈւՊՀՀ-ով երեխաների վարքագծային և կրթական առանձնահատկություններին:
- Չամագործակցություն ծնողների և այլ ուսուցիչների հետ յուրաքանչյուր երեխայի ուսումնական նպատակների սահմանման և դրանց հասնելու ռազմավարությունների ընտրության նպատակով:
- Մտածողության և հանգստության տեխնիկայի կիրառություն՝ մտածելու համար նախատեսված առաջադրանքներ, շնչառական վարժություններ և կարճ դադարներ, որոնք կօգնեն կառավարել սթրեսը:
- Պարբերաբար մոնիթորինգի իրականացում ռազմավարության արդյունավետությունը գնահատելու նպատակով:

**Մեթոդաբանական հիմքերը:** ՈւՊՀՀ-ի պատճառների ուսումնասիրության հարցում մեթոդաբանական հիմք ենք ընդունել՝ հայկական և արտասահմանյան հեղինակների հրատարակած գրքերն ու հոդվածները:

**Չեռագոտության մեթոդները:**

Ուսումնասիրության կազմակերպման գործընթացում օգտագործել ենք հետևյալ մեթոդները.

- 1) Հոգեբանական, մանկավարժական հայեցակարգերի, գրականության և մեթոդների ուսումնասիրություն և վերլուծություն,
- 2) Հարցաթերթերի և թեստավորման մեթոդները՝ տվյալների հավաքագրման նպատակով:
- 3) Դիտում:

**Աշխատանքի կառուցվածքը:** Աշխատանքը բաղկացած է ներածությունից, երկու գլխից եզրակացությունից, գրականության ցանկից և հավելվածից:

# ԳԼՈՒԽ 1 ՈՒՊՅՅ ԶԱՄԱԽՏԱՆԻՇ ՈՒՆԵՑՈՂ ԵՐԵԽԱՆԵՐԻ ՅԻՄՆԱԿԱՆ ԲՆՈՐՈՇՈՒՄԸ և ԿՐԹԱԿԱՆ ԳՈՐԾՆԹԱՑՈՒՄ ԱՌԿԱ ՄԱՐՏԱՅՐԱՎԵՐՆԵՐԸ:

## ԳԼՈՒԽ 1. 1 ՈՒՊՅՅ-Ի ԲՆՈՐՈՇՈՒՄԸ ԵՎ ԱՌԱՆՁՆԱՅԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Յիպերակտիվությունը կենտրոնական նյարդային համակարգի աննշան օրգանական փոփոխությունների արտահայտումն է, որի հիման վրա նկատվում են տարբեր նյարդային հակազդեցություններ՝ վարքի, հույզերի, խոսքի խանգարումներ: Ուշադրության պակասի և հիպերակտիվության համախտանիշը կամ ուշադրության դեֆիցիտ և հիպերակտիվության խանգարումը զարգացման նյարդաբանական-վարքային խանգարում է (այսուհետ ՈՒՊՅՅ), որը հաճախ սկսվում է մանկական տարիքում և դրսևորվում է այնպիսի ախտանշաններով ինչպիսիք են ուշադրության կենտրոնացման խնդիրները, գերակտիվությունը և վերահսկման դժվարությունները<sup>1</sup>: Յամաձայն “Learning Disabilities” ասոցիացիայի ՈՒՊՅՅ-ն չի համարվում սովորելու անկարողություն: Բայց և այնպես անհրաժեշտ է այլ մոտեցումներ, մեթոդներ կիրառել աշակերտների հետ, ովքեր ունեն ՈՒՊՅՅ: Անգամ առանց այս համախտանիշի երեխաների համար անհրաժեշտ է լինում ուսուցման նոր մեթոդներ մշակել դասերն ավելի հեշտացնելու համար<sup>2</sup>:

Յիպերակտիվ երեխաները դեռևս վաղ տարիքից տարբերվում են իրենց տարիքային խմբին պատկանող մյուս երեխաներից. այս երեխաների մոտ նկատվում են քնի խանգարումներ, նրանք ավելի հաճախ են լաց լինում, կարող են նկատվել խոսքի բնականոն զարգացման խանգարումներ: Վերջինս պայմանավորված է այն հանգամանքով, որ հիպերակտիվությունն արտահայտվում է ուշադրության պակասով, վերջինս էլ խոչընդոտում է խոսքի յուրացման գործընթացին<sup>3</sup>: Այսինքն, իր տարեկիցների համեմատ, խոսքը յուրացնելու և իրեն շրջապատող միջավայրը ընկալելու ավելի քիչ հնարավորություններ ունի: Ստորև ներկայացված է ՈՒՊՅՅ-ի 3 հիմնական նշանները<sup>4</sup>:

<sup>1</sup> Du Paul G. ADHD in the schools Assessment and intervention strategies New York 2014 էջ 8

<sup>2</sup> <https://www.imdproc.am/info/usucichnerin/uphh>

<sup>3</sup> Paul H. Wender ADHD A Guide to Understanding Symptoms, Causes, Diagnosis, Treatment, and Changes Over Time in Children, Adolescents, and Adults, 2017, էջ 30-35

<sup>4</sup> <https://edarticle.com/strategies-for-teaching-adhd-students-at-home/>.



**Գծապատկեր 1.1 ՈւՊՀՀ-ի 3 հիմնական նշանները<sup>5</sup>**

Եթե երեխան ունի ուշադրության պակասի և հիպերակտիվության համախտանիշը, ապա ծնողներն ու ուսուցիչներն բախվում են հիմնականում երեք կարևորագույն խնդիրների.

- Ցրվածություն:** ՈւՊՀՀ ունեցող երեխաների համար դժվար է կենտրոնանալ մի առարկայի վրա երկար ժամանակով: Միակ տարբերակը, որ ծնողներն ու ուսուցիչները կարող են կիրառել այս հարցին լուծում տալու համար՝ դարձնել դասերն ավելի կարճ, օգնել բաժանել մի քանի մասի երկար առաջադրանքները: Օրինակ մաթեմատիկան այն մեծ խնդիրներից է, որը բաժանվում է մի քանի կառավարելի կտորների: Աշակերտին «մաթեմատիկա անել հրահանգելու փոխարեն օգտակար կլիներ, որ և՛ ուսուցիչը, և՛ աշակերտն ունենան կարճաժամկետ նպատակ ավարտելու մաթեմատիկական առաջադրանքի մի մասը, որից հետո ընդմիջում անեն: Տեսալին ուսուցման դեպքում հնարավորել է կառավարել աշակերտի միջավայրը, աղմուկը: Այստեղ չկան 30 այլ աշակերտներ, որոնք կարող են խռովություններ առաջացնել: Տեսալին ուսուցումը շատ ճկուն է և օգնում է այս համախտանիշով երեխաներին ծախսել ավելի կամ պակաս ժամանակ՝ կախված իրենց կարիքներից:
- Գերակտիվություն:** Երբեմն թվում է, թե ՈւՊՀՀ ունեցող

<sup>5</sup> <https://www.imdproc.am/info/usucichnerin/uphh>

երեխաներն անընդհատ շարժման մեջ են: Դասարանում՝ մյուս երեխաների ներկայության դեպքում, ավելի դժվար է ուսուցումն իրականացնել: Երբեմն նրանց անհրաժեշտ է լինում թռչկոտել մեկ ոտքի վրա բազմապատկման աղյուսակն ասելու համար: Շարժումն ու նոր բան սովորելու ընթացքը շատ օգտակար է լինում համադրելիս, քանի որ թույլ է տալիս աշակերտին սպառել ավելորդ էներգիան ու հիշողության մեջ ավելի ամրապնդել սովորածը: Գոյություն ունեն մի քանի մեթոդներ, որոնք կարող են օգնել ավելորդ էներգիայի սպառման հարցում: Օրինակ մի ընտանիք թույլ է տվել, որ իր երեխան օգտագործի գնդակը որպես աթոռ: Նրան նաև թույլատրվում էր թեթև թռչկոտել դրա վրա, նաև ճոճվել առաջ-հետև: Անգամ երբ նա համեմատաբար անշարժ նստում էր, նրան միևնույնն է, անհրաժեշտ էր լինում հավասարակշռությունը պահել, և այսպես ծախսվում էր էներգիայի ավելցուկը: Մեկ այլ բան, որ պետք է անել՝ երեխայի ձեռքերը զբաղված պահելն է: ՈՒՊՀՀ ունեցող երեխաները կարծես թե կարողանում են անել միաժամանակ մի քանի բան և նույնիսկ օգուտ են ստանում, երբ թույլատրվում է մեկից ավել բաներ անել:

3. **Շուտ հիասթափություն:** ՈՒՊՀՀ-ով երեխաները հեշտ են հիասթափվում: Նրանք հիմնականում չեն սիրում կրկնվող առաջդրանքներ, ընթերցանության դասեր կամ էլ դասեր, որոնք պահանջում են շատ գրել: ՈՒՊՀՀ-ն իրենից չի ներկայացնում սովորելու անկարողություն, բայց միևնույն ժամանակ այս երեխաներն ունեն սովորելու իրենց տարբեր ձևերը: Որպես կանոն, նրանց ուղեղը վերլուծում է իրերը շատ արագ, այդ պատճառով էլ կրկնվող առաջադրանքները թվում են ժամանակի կորուստ: Իսկ հիմնականում վատ ձեռագիր ունենալը բացատրվում է նրանով, որ գաղափարները մտքում ավելի արագ են ծնվում, շարժվում, քան նրանք կարողանում են հանձնել դրանք թղթին<sup>6</sup>: Հիասթափությունները վերացնելու համար կարելի է թույլ տալ, որ երեխան կարդալու փոխարեն լսի գրքի ձայնային տարբերակը:

---

<sup>6</sup> <https://edarticle.com/strategies-for-teaching-adhd-students-at-home/>



## **ԳԼՈՒԽ 1.2 ՈՒՊՅՐ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՆԱԽԱՊԱՏՍՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՏԱՐԱԾՎԱԾՈՒԹՅՈՒՆԸ**

ՈւՊՅՐ — ի հետազոտությունները սկսվել են մոտ 150 տարի առաջ: 1845-ի կեսին գերմանացի նյարդահոգեբույժ Հայնրիխ Հոֆմանը առաջինն էր, ով նկարագրեց չափազանց շարժուն երեխայի և նրան անվանեցին «Ֆիժեթ Ֆիլ»: XIX դարի վերջին հայտնի հոգեբան Վիլյամ Ջեմեսը (1890) նկարագրել է իմպուլսիվության դրսևորումները երեխաների մոտ : 20-րդ դարից ի վեր, այս շեղումները բժիշկների կողմից լուրջ քննության առարկա էր դարձել: 1902թ. «Lancet ամսագրում հայտնվում է անգլիացի բժշկ Գ.Ֆ. Սթիլիի հոդվածը՝ նվիրված հիպերակտիվ երեխաներին: Համարվում էր, որ նման վարքը ունի «կամքի ուժի խանգարման բնույթ, որը տեղի է ունենում «անբավարար բարոյական վերահսկողության պատճառով: Բացի այդ, հետազոտողը բացահայտել էր, որ տղաների շրջանում այն գերակշռող է: Ուսումնասիրելով այս խանգարումով 20 երեխաներին, նա բացահայտել էր, որ տղաների և աղջիկների հարաբերակցությունը՝ մոտավորապես 3:1 է<sup>7</sup>: Ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ տղաների մոտ 4-ից 9 անգամ ավելի հաճախ է ախտորոշվում ՈւՊՅՐ, քան աղջիկների<sup>8</sup>: Գերակտիվության ախտանիշները մեծանալու հետ պակասում են, սակայն ցրվածությունն ու իմպուլսիվությունը ուղեկցում են մարդուն երկար ժամանակ:<sup>9</sup>

## **ԳԼՈՒԽ 1.3 ՈՒՊՅՐ-ՈՎ ՏԱՌԱՊՈՂ ԵՐԵՒԱՆՆԵՐԻ ՀԻՄՆԱԿԱՆ ԱՌԱՆՁՆԱԶԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԵՎ ԱԽՏՈՐՈՇՄԱՆ ԶԱՓԱՆԻՇՆԵՐԸ**

Կարելի է առանձնացնել հետևյալ տարբերակիչ առանձնահատկությունները, որոնք արտահայտվում են երեխաների մոտ.

- Երեխան չափազանց ակտիվ է, նա աննպատակ վազում ու ցատկում է ամբողջ օրը:

<sup>7</sup> García F. The Prehistory Of Adhd: Additives For An Untenable Diagnosis 2017, էջ. 108-113

<sup>8</sup> Henderson K. Teaching Children With Attention Deficit Hyperactivity Disorder: 2006, էջ 7-8

<sup>9</sup> Պապանյան Հ., Գերակտիվ գերակտիվ երեխա. Ինչպես են աշխատում նրա հետ, <https://www.vsu.am/grqer/2015/aprak/papanyanhaykush.pdf>

- Երեխայի մոտ նկատվում է դժվար կենտրոնացում, որի պատճառով նա ծայրաստիճան անհանգիստ է:
- Աշակերտները հաճախ ունենում են վատ գնահատականներ՝ առաջադրանքների վրա կենտրոնանալու խնդիրների պատճառով:
- Հաճախ դրսևորվում են նաև այլ նշաններ.
- Երեխան կարող է լինել ագրեսիվ
- Անհնազանդություն, անտեսում է իրեն հասցեագրված ցանկացած մեկնաբանու- թյուն:

Վ.Վ. Սատարին գտնում է, որ ախտորոշումը տրվում է նյարդաբանի կողմից, եթե առկա են 14-ից գոնե 8 նշանները: Ամերիկացի հոգեբանները Պ. Բակերը և Մ. Ալմարոն առաջարկում են երեխայի հիպերակտիվության ախտորոշման հետևյալ չափանիշները:

- 1) **Ակտիվ ուշադրության պակաս;** նա դժվարանում է կազմակերպվել; հաճախ կորցնում է իրերը, խուսափում է ձանձրալի և հոգեկան լարվածություն պահանջող առաջադրանքներից, հաճախ մոռացկոտ է):
- 2) **Անդադարություն շարժունակություն** (անընդհատ բզբզում է; ցույց է տալիս անհանգստության նշաններ; քնում է շատ ավելի քիչ, քան մյուս երեխաները, նույնիսկ մանկության տարիներին; շատախոս է:
- 3) **Իմպուլսիվությունը** պատասխանում է առանց հարցը լսելու, չի կարողանում սպասել իր հերթին, հաճախ է միջամտում, ընդհատում է, վատ է կենտրոնանում; չի կարող սպասել վարձատրության, առաջադրանքներ կատարելիս նա այլ կերպ է վարվում և ցույց է տալիս շատ տարբեր արդյունքներ<sup>10</sup>:

---

<sup>10</sup> Segal J., and Smith M., [Effective Communication - HelpGuide.org](http://EffectiveCommunication-HelpGuide.org) էջ 1-2

## **ԳԼՈՒԽ 2 ՈՒՊՅՅ ՀԱՄԱԽՏԱՆԻՇԻ ՀԱՂԹԱՀԱՐՄԱՆ ՈՒՂՈՒԹՅԱՄԲ ԿԻՐԱՌՎՈՂ ՌԱԶՄԱՎԱՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ և ԴՐԱՆՑ ԱՐԴՅՈՒՆԱՎԵՏՈՒԹՅՈՒՆԸ**

### **ԳԼՈՒԽ 2. 1 ՈՒՊՅՅ ՀԱՄԱԽՏԱՆԻՇԻ ԴԵՊՔՈՒՄ ԿԻՐԱՌՎՈՂ ՌԱԶՄԱՎԱՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ**

Մարտահրավերների հաղթահարման գործընթացում, որոնց բախվում են ուսուցիչները ՈՒՊՅՅ համախտանիշի արդյունքում, կարող են կիառվել հետևյալ ռազմավարությունները՝

- Նախորդող մանիպուլյացիա
- Հետևանքային մանիպուլյացիա
- Ճանաչողական վարքային միջամտություններ
- Դեղամիջոցներ

Ուսումնական միջավայրին նախորդող մանիպուլյացիան անմիջապես վերաբերում է դասաստեյակի դիրքին և կառուցվածքին, իսկ առաջադրանքները՝ անմիջականորեն կապված է առաջադրանքի հատուկ բնութագրերին: Կարևոր պայման է ունենալ հստակ գրաֆիկ և պարբերաբար հիշեցնել դասարանի կանոնները: Այս կանոնները պետք է նշվեն հստակ, լինեն հակիրճ և պարբերաբար վերանայվեն: Այս ռազմավարության մեջ շատ հաճախ կիրառվում է նախընտրելի առարկաները դասակարգել չնախընտրելի առարկաներից հետո, որը աշակերտներին կմոտիվացնի ավարտին հասցնել աշխատանքը: Այս ռազմավարության շրջանակներում կատարվել է հետազոտություն՝ փոփոխելով դասարանում սեղանների դիրքը: Կիրառվել է 3 տարբերակ՝ կլաստերներ, տողեր և շրջաններ: Փորձը կատարվել է 3 դասաժամի ընթացքում, ընդհանուր առմամբ 135 րոպե տևողությամբ:

Փորձի արդյունքները ցույց տվեցին, որ սեղանների դասավորությունը չի ազդում անհատական աշակերտի դասին և քննարկումներին մասնակցության և վարքի վրա: Բայց և այնպես շրջանաձև դասավորության դեպքում ավելի շատ երեխաներ փորձեցին

մասնակցել քննարկումներին՝ առանց հետևելու համապատասխան ընթացակարգին՝ ձեռք բարձրացնելուն:

Կլաստերային դասավորությունը առաջադրանքի ուղղությամբ կենտրոնացվածություն ուներ և՛ բանավոր, և՛ ֆիզիկապես, ավելի շատ ձեռքեր բարձրացվեցին, քան տողային դասավորության արդյունքում: Ամենից շատ քննարկումներ և պատասխաններ գրանցվեցին տողային դասավորության արդյունքում: Ամփոփելով հետազոտության արդյունքները՝ կարող ենք հանգել այն եզրահանգման, որ սեղանների շրջանաձև դասավորությունը լավացնում է երեխաների միջև համագործակցությունը, ազդում է ընդհանուր մասնակցության, մտածողության և համապատասխան մեկնաբանությունների վրա, որոնք դրական ազդեցություն կարող են ունենալ ուսման վրա:

## **ԳԼՈՒԽ 2. 2 ՀԵՏԵՎԱՆՔԱՅԻՆ ՄԱՆԻՊՈՒԼՅԱՑԻԱ ԵՎ ՃԱՆԱԶՈՂԱԿԱՆ ՎԱՐՔԱՅԻՆ ՄԻՋԱՄՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿԻՐԱՌՈՒԹՅՈՒՆԸ ԴՊՐՈՑՈՒՄ**

Հետևանքային մանիպուլյացիան վերաբերում է աշակերտի պահվածքից հետո ուսուցչի արձագանքին: Արձագանքը կարող է լինել ինչպես դրական՝ գովաբանելով համապատասխան պահվածքը, այնպես էլ բացասական՝ հանդիմանելով ոչ պատշաճ պահվածքը: Այս ռազմավարությունը շատ հաճախ դրական ազդեցություն է ունենում վարքագծի վրա: ՈՒՊՀՀ ախտորոշմամբ երեխաների դեպքում կարող է բավարար ազդեցություն չունենալ: Որոշ հետազոտողներ ուսումնասիրել են ուսուցիչների արձագանքի ազդեցությունը երեխաների վրա: Համաձայն հետազոտության արդյունքների բացասական արձագանք ստացած աշակերտների վարքում դրական փոփոխություններ են գրանցվել, և ավելի արդյունավետ են ու կառուցողական, եթե դրանք կարճ են, հստակ և կատարվում են վատ վարքագիծ դրսևորելու նախնական փուլում: Այս ռազմավարության շրջանակներում կատարվել է հետազոտություն միայն դրական արձագանք դիտարկելով՝ առանց բացասական հետևանքների, դրական և բացասական արձագանքների համադրություն՝ ուժեղ դրական արձագանքներին ավելանում է բացասական արձագանքներ, և վերջում ուժեղ դրական արձագանքներին ավելանում է մարող բացասականը, որտեղ բացասական արձագանքը սահմանափակ էր

և կազմում էր 1-ը 6-ի հարաբերակցությամբ: Հետազոտության արդյունքում ակնհայտ դարձավ, որ միայն դրական հետևանքները անարդյունավետ էին և բացասական ազդեցություն էին ունեցել երեխաների վարքագծի վրա: Այսպիսով կարող ենք ենթադրել, որ նորություններ սովորելիս երեխաներին անհրաժեշտ է ոչ միայն դրական, այլ նաև բացասական արձագանքներ՝ որպես անպատշաճ վարքագծի վերահսկողության արդյունք<sup>11</sup>:

Այս ռազմավարության շրջանակներում կատարվել է նաև մեկ այլ հետազոտություն՝ միավորների համակարգ: Աշակերտները պետք է սովորեին 7 բառ, օգնեին իրենց ընկերներին այդ բառերը սովորելու գործում, կիրառեին դրանք նախադասության մեջ: Ամեն անգամ այս առաջադրանքը կատարելիս, աշակերտը ստանում էր միավոր և 4 նման միավոր հավաքելիս նրանք կարող էին 15 րոպե որևէ խաղ խաղալ: Այս հետազոտության արդյունքում բարձրացավ աշակերտների ուսումնական առաջադիմությունը և մոտիվացիան:

Ճանաչողական վարքային միջամտությունները շեշտում են ինքնատիրապետման եւ խնդիրների լուծման հմտությունների զարգացումը: Մի շարք ուսումնասիրությունների արդյունքները աջակցում են ՈՒՊՀՀ համախտանիշ ունեցող երեխաների համար ճանաչողական-վարքային ռազմավարության տարբեր դրսևորումների, ինչպիսիք են ինքնավերահսկումը, ինքնազարգացումը եւ ինքնուրույն հրահանգները կիրառությունը: Իհարկե այս ռազմավարությունը կիրառելը բավականին բարդ գործընթաց է և շատ ժամանակատար: Համաձայն որոշ ուսումնասիրությունների՝ ռազմավարության կիրառությունը դրական ազդեցություն է ունենում երեխայի վարքագծի վրա՝ նվազում է իմպուլսիվությունը: Առաջին փորձի արդյունքում երեխաները 7 շաբաթյա ընթացքում օգտագործել են այս ռազմավարությունը, և նրանց ծնողները փորձի ավարտին դրական են գնահատել երեխաների վարքում փոփոխությունները: Ինքնագնահատման և ուսուցիչների կողմից համապատասխանող գնահատման ռազմավարության կիրառման արդյունքում ՈՒՊՀՀ ունեցող երեխաների վարքագծում անհամեմատ փոփոխություններ են նկատվում: Այս ռազմավարության արդյունքում երեխաները իրենց վարքը գնահատում են նախապես սահմանված վարկանիշային սանդղակի հիման վրա և ուսուցիչը նույնպես գնահատում է երեխայի

---

<sup>11</sup> G. O'Leary The efficacy of all-positive management as a function of the prior use of negative consequences էջ 265-266

վարքը՝ հիմնվելով վարկանիշի վրա: Աստիճանաբար ուսուցչի աջակցությունը նվազում է: Աշակերտը թղթի վրա գրանցում է, թե երբ է տեղի ունենում ցանկալի վարքագիծը: Այս դեպքում կիրառվում է նաև ինքնամոնիթորինգը և երեխաներն իրենք սկսում են իրենց գովասանքի խոսքեր ասել կամ միավոր տալ, երբ դրսևորում են դրական վարքագիծ: Մոտիվացնող ռազմավարությունը իրենից ներկայացնում է նպատակների սահմանումը և դրանց հասնելու ուղիներն ու արդյունքները: Աշակերտն ու ուսուցիչը միասին են սահմանում նպատակը և ամենօրյա պարբերականությամբ չափում են նպատակին հասնելու արդյունքները: Ժամանակի ընթացքում այդ նպատակը կարող է փոփոխվել:

Վերջին ռազմավարությունը դեղորայքային բուժումն էր, ինչը կարող է կարճաժամկետ դրական ազդեցություն ունենալ ՈՒՊՅՅ-ով հիվանդ երեխաների վարքագծի վրա՝ հիպերակտիվության, անուշադրության, իմպուլսիվության: Սակայն երկարաժամկետում որևէ դրական ազդեցություն չի գրանցվել դեռևս, ինչպիսիք են կրթական ոլորտում բարելավվումները, շրջապատում հարմարվածությունը կամ մտածելու կարողության լավացումը:

Ամփոփելով նշենք, որ կան բազմաթիվ ռազմավարություններ այս երեխաներին օգնելու համար, բայց ամենաարդյունավետ տարբերակը բոլոր ռազմավարությունների համատեղ կիրառությունն է: Այս ծրագիրը պետք է ներառի վարքագծի մշտադիտարկում և՛ տանը, և՛ դպրոցում, սթրեսի կառավարման, խնդիրների լուծման, նպատակների սահմանման և արդյունքերի գնահատման, իսկ սոցիալական հարաբերությունների բարելավման նպատակով ցանկալի է որևէ խմբակի հաճախելը՝ լող, մարմնամարզություն, մարտարվեստ:

Ամփոփելու համար հետազոտությունը կատարվել է հարցում ուսուցիչների շրջանում պարզելու համար, թե որ ռազմավարությունն է ավելի արդյունավետ: Ընտրվել է ընդհանուր առմամբ 15 ռազմավարություն և յուրաքանչյուրին տրվել է 2 գնահատական՝ կիրառման հաճախակիությունը և արդյունավետությունը (ՏԵՍ հավելված 1-ը): Արդյունքների համաձայն ամենաքիչ օգտագործվող ռազմավարությունը ինքնատիրապետում և ինքնամեկուսացումն էր, որոնք նաև ամենաանարդյունավետն էին նաև: Շատ ուսուցիչներ անգամ այս ռազմավարությունը չէին կիրառել: Ամենաշատ կիրառվող և ամենաարդյունավետ ռազմավարությունը համարվում է կառուցվածքային փոփոխությունը և դասարանի ֆիզիկական փոփոխությունն էր: Երբեմն օգտագործվող և արդյունավետ ռազմավարություններից է նաև միավորների համակարգը և ուսուցչի

ուշադրությունը: Իսկ երբեմն օգտագործվող և երբեմն արդյունավետ ռազմավարությունը  
ուսուցիչների մեծամասնությունը համարել է նպատակների սահմանում:

## ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Դպրոցական տարիքի երեխաների մի մասը տառապում է ՈՒՊՅՀ հիվանդությամբ և շատ ուսուցիչներ բավարար պատրաստված չեն նման երեխաների կրթությունը ճիշտ ապահովելու համար: Յետազոտության նպատակն էր պարզել, թե ի՞նչ ռազմավարություններ են կիրառում ուսուցիչները և որո՞նք են դրանցից արդյունավետ: Յետազոտության նպատակի իրականացման համար կատարվել է հարցում 45 ուսուցիչների շրջանում՝ 15 ռազմավարության ընտրությամբ: Արդյունքում պարզ դարձավ, թե ո՞ր ռազմավարություններն են ուսուցիչները կիրառում հաճախակի և որքանով են դրանք արդյունավետ: Այսպիսով ամփոփելով հետազոտության արդյունքները եկանք այն եզրահանգման, որ.

- ՈՒՊՅՀ ախտորոշմամբ երեխաների ուսումնական գործընթացի կազմակերպումը որոշ մարտահրավերներ է պարունակում, քանի որ այս երեխաներն ունեն որոշ վարքագծային առանձնահատկություններ՝ ուշադրության պակաս, հիպերակտիվություն, իմպուլսիվություն և անհամբերություն, երբեմն նաև ագրեսիվություն:
- Տղա երեխաների մոտ ՈՒՊՅՀ-ն ավելի տարածված է քան աղջիկների դեպքում:
- Ամենաարդյունավետ և շատ կիրառություն ունեցող ռազմավարությունը ուսուցիչները համարում են կառուցվածքային փոփոխությունները՝ գրաֆիկի, կանոնների, սպասումների:
- Հաջորդիվ իր արդյունավետությամբ չի գիջում դասարանի կառուցվածքի փոփոխությունները՝ սեղանների դասավարությունը:
- Ոչ հաճախ կիրառվող ռազմավարություններից և երբեմն արդյունավետ է համարվում նպատակների սահմանման և դրանց չափման, ինչպես նաև միավորների համակարգի ռազմավարությունները: Այս ռազմավարության արդյունքում բարձրանում է երեխաների մոտիվացիան:
- Յետազոտության արդյունքում պարզ դարձավ, ՈՒՊՅՀ համախտանիշով երեխաների կրթական գործընթացը ճիշտ ապահովելու համար ամենաարդյունավետ տարբերակը կլինի բոլոր ռազմավարությունների համատեղ



կիրառությունը՝ վարքագծի մոնիթորինգ, միավորների համակարգ, նպատակների սահմանում;

- Հետազոտության արդյունքներից ելնելով առաջարկվում է ՀՀ-ում նույնպես ներդնել միջազգային մակարդակում լայնորեն տարածված և արդյունավետ ռազմավարությունները՝ կառուցվածքի փոփոխություններ, դասարանի ֆիզիկական կանոնների փոփոխություններ, նպատակների սահմանում և արդյունքների չափում, միավորների համակարգ ներդրում, վարքի մշտադիտարկում:

## Օգտագործված գրականության ցանկ

1. George J. DuPaul, Gary Stoner ADHD in the Schools: Assessment and Intervention Strategies, Guilford Publications New York 2014 էջ 8/386
2. Պապանյան Ջ., Գերակտիվ երեխա. Ինչպես եմ աշխատում նրա հետ, <https://www.vsu.am/grqer/2015/aprak/papanyanhaykush.pdf>
3. García F. The Prehistory Of Adhd: Additives For An Untenable Diagnosis 2017, էջ. 108-113/396
4. Henderson Kelly, Teaching Teaching Children with Attention Deficit Hyperactivity Disorder: Instructional Strategies and Practices Ideas that work, U.S. Department of Education, Office of Special Education and Rehabilitative Services, Office of Special Education Programs, 2006, էջ 7-8/36, <https://files.eric.ed.gov/fulltext/ED495483.pdf>
5. Paul H. Wender and David A. Tomb ADHD A Guide to Understanding Symptoms, Causes, Diagnosis, Treatment, and Changes Over Time in Children, Adolescents, and Adults, USA Oxford University Press 2017, էջ 30-35/313
6. Jeanne Segal, Ph.D., and Melinda Smith, M.A. Last updated: September 2018. էջ 1-2/8 <https://www.helpguide.org/articles/add-adhd/teaching-students-with-adhd-attention-deficit-disorder.htm>
7. <https://www.imdproc.am/info/usucichnerin/uphh>
8. <https://edarticle.com/strategies-for-teaching-adhd-students-at-home/>
9. <https://www.nimh.nih.gov/health/topics/attention-deficit-hyperactivity-disorder-adhd>

## Հավելվածներ

Հավելված 1 Հարցման արդյունքները:

| Հանախականությունը            | Հանախականությունը |    |    | Ուսումնականությունը                       | Արդյունավետությունը |    |    |
|------------------------------|-------------------|----|----|---|---------------------|----|----|
|                              | 1                 | 2  | 3  |   | 1                   | 2  | 3  |
| 1 = գրեթե կամ ոչ             |                   |    |    |   |                     |    |    |
| 2-երբեմն                     | 0                 | 2  | 43 | Կառուցվածքի փոփոխություն, կանոններ, գրաֆի | 0                   | 12 | 33 |
| 3 = Շատ հաճախ                | 2                 | 13 | 30 | Դասարանի ֆիզիկական կառուցվածք             | 2                   | 19 | 24 |
| Արդյունավետությունը          | 1                 | 15 | 29 | Տարբեր շտրհանդեսներ և նյութեր             | 1                   | 19 | 25 |
| 1-ընդհանրապես արդյունավետ չէ | 3                 | 29 | 13 | Ուսուցման արագ տեմպ                       | 7                   | 23 | 15 |
| 2-երբեմն արդյունավետ         | 3                 | 10 | 32 | Ազդանշաններ և հուշումների կիրառություն    | 5                   | 12 | 18 |
| 3 = շատ արդյունավետ          | 7                 | 24 | 14 | Կարճ առաջադրանքներ                        | 5                   | 25 | 15 |
|                              | 17                | 19 | 9  | Ընկերներին ուսուցում                      | 12                  | 18 | 12 |
|                              | 0                 | 3  | 42 | Ուսուցչի ուշադրություն                    | 1                   | 22 | 22 |
|                              | 7                 | 21 | 17 | Միավորների ուժեղացման համակարգ            | 6                   | 24 | 12 |
|                              | 14                | 23 | 8  | Խմբային իրավիճակներ                       | 14                  | 23 | 5  |
|                              | 11                | 20 | 13 | Ազատ ժամ                                  | 10                  | 20 | 9  |
|                              | 23                | 20 | 2  | Ինքնազնադատում                            | 15                  | 17 | 5  |
|                              | 34                | 11 | 0  | Ինքնատիրապետում                           | 18                  | 11 | 1  |
|                              | 31                | 10 | 3  | Ինքնամեկուսացում                          | 19                  | 12 | 3  |
|                              | 9                 | 26 | 10 | Նպատակների սահմանում                      | 7                   | 28 | 8  |

Հավելված 2 Սեղանների դասավորություն՝ շրջանաձև, տողային, կլաստերային

